

ՓՈԽԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ՈՃՈՒՄ

ՕՅԵԼՑԱ ԲԱՐԱՑԱՆ

Հայտնի է, որ լեզուն գործառույթ է մարդու հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Նայած թե լեզուն հասարակական կյանքի որ բնագավառում, գործառույթյան ինչ ոլորտում ե ինչպիսի նպատակներով է գործածվում, ստանում է տարբեր երանգավորումներ, կիրառվում որոշակի տարբերություններով: Արտալեզվական այս հիմքի վրա ձևավորվում են լեզվի գործառական ոճերը:

Ժամանակակից ոճաբանությունը ընդունում է գործառական հինգ ոճ՝ գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, գեղարվեստական, ժողովրդախոսակցական:

Հրապարակախոսական ոճի հիմնական նպատակը աղիտացիան ու պրոպագանդան է, նրա ամենակարևոր խնդիրը լսողի կամ ընթերցողի գիտակցության, կամքի, զգացմունքների վրա ազդելն է, հասարակական որոշակի կարծիքի, համոզմունքների ձևավորումը: Այն պետք է կարողանա ընթերցողին (լսողին) դարձնել հասարակական հերթական խնդիրների լուծման ակտիվ մասնակից: Հրապարակախոսական ոճը վեր է հանում ժամանակի կարևոր, հասարակական հնչողություն ունեցող հարցերը՝ կապված քաղաքականության, գիտության, գրականության, տնտեսության, բարոյականության, մշակույթի, դաստիարակության, կենցաղի հետ:

Հրապարակախոսական ոճը կարելի է հասկանալ լայն և նեղ առումով. նեղ առումով հասկանում ենք մամուլի, լայն առումով՝ հասարակական-քաղաքական թևամաներով զեկուցումների, ելույթների, գրքերի լեզուն:

Ընթերցողների (լսողների) վրա առավել արդյունավետ ներգործելու նպատակով հրապարակախոսությունն օգտվում է լեզվի արտահայտչական ու պատկերավորման միջոցներից, որոնց մեջ ամենագործածականը փոխաբերությունն է: Առանձնապես փոխաբերություններով հարուստ են XIX դարի վերջի և XX դարի սկզբի հրապարակախոսական ստեղծագործությունները: Այդ դարաշրջանում փոխաբերությունները դարձել էին պատմական տվյալ ժամանակահատվածի մտածողության արտահայտման յուրահատուկ եղանակ, որովհետև այդպիսին էր ժամանակի հրամայական պահանջը: Փոխաբերության լավագույն օրինակներ կան նրանց հրապարակախոսական ստեղծագործություններում, ովքեր օժտված են երևույթների ընդհանրությունը տեսնելու նուրբ ճաշակով, սուր դիտողականությամբ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մամուլում սկսեցին երևան գալ փոքր ծավալի հրապարակախոսական նյութեր՝ ռազմականչը, մարտահրավերներ: Տարածում գտավ նաև հրապարակախոսության նամակ-դիմումի ժանրը: Օրինակ՝ հայ մտավորականության կոչ-դիմումը «Արտասլահմանյան երկրների բոլոր հայերին» (ՍՀ, 17. VIII. 1941), «Անդրկովկասի եղբայրական ժողովուրդներին» (ՍՀ, 16. V. 1943), հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի «Ընկեր Սաֆարյանի գերամասի հայ մարտիկների նամակը հայ ժողովրդին» (ՍՀ, 23. V. 1943):

Հրապարակախոսական ոճը պահանջում է ներքին համոզվածություն, կրքոտություն: Այն անջրպետված չէ գործառական մյուս ոճերից: Հրապարակախոսական ոճի մեջ համատեղվում են գիտական, գեղարվեստական և խոսակցական ոճերի որոշ առանձնահատկություններ:

Հրապարակախոսությունը ուղղված է ընթերցողների, ունկնդիրների ամենալայն շրջաններին, այն նախատեսված է մասսայական և, իհարկե, ոչ միա-

տարր լսարանի համար, որին հեղինակը պիտի կարողանա համոզել, ստիպել լսելու իրեն: Հրապարակախոսության անկապտելի հատկություններից է շարադրվող նյութի հանրամատչելիությունը: Շարադրանքը պետք է լինի նաև սեղմ, ընթերցողից (լսողից) չպետք է պահանջի նախնական նախապատրաստվածություն՝ նյութը ընկալելու համար:

Հրապարակախոսական ոճին հատուկ են նաև գեղարվեստական ոճի որոշ հատկություններ, գծեր: Հրապարակախոսությունը պետք է կարողանա ընթերցողին համ լսողին հրապուրել ոչ միայն տրամաբանորեն հիմնավորված փաստարկումներով, գրագետ լեզվով, այլ նաև խոսքի տպավորիչ բնույթով հուզել նրան, պահպանել նրա ուշադրությունը: Հիշենք, որ հրապարակախոսության հիմնական արտահայտություններից մեկը՝ ագիտացիան, ծագում է լատիներեն *agito* բայից, որը նշանակում է՝ հուզում եմ:

Հրապարակախոսության մեջ, մեծ մասամբ թերթի լեզվում, կարող են հաճախ օգտագործվել պատրաստի կապակցություններ, կաղապարային արտահայտություններ, կրկնված փոխաբերություններ, որոնք ուժեղացնում են խոսքի ներգործությունը, խտացնում տպավորությունը:

Այսպես՝ Հայրենական մեծ պատերազմի շրջանում գրված, նաև այն արտացոլող հրապարակախոսական հոդվածներում, գրքերում, ինչպես օտինակ Ա. Ղազարյանի «Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր» քառահատոր աշխատության մեջ, հաճախ են կրկնվում «արծիվներ», «բազեններ», «ֆաշիստական ռմակ», «չար ուժերի ռմակներ», «գայլերի ռմակ», «ֆաշիստական զագան», «կատաղած բուրենիներ», «հիտլերիզմի ուրջ», «ֆաշիստական ուրջ», «մահվան զնդաճ» (ճամբար), «պատերազմական քառերաբեմ», «կրակե դժոխք», «կրակե նեղեղ», «աբյուռնոս քաթ», «Մոսկվայի բանալի» (Սմոլենսկի մասին), «սովետական երկրի ազատագրման բանալի» (Դնեպրի մասին), «արեճե տեղատարափ», «կրակե փոթորիկ», «պատերազմի ճեղքներ», «հրետանու ափսոսանք» և նման փոխաբերություններ:

Հրապարակային խոսքի մեջ որոշակի փոխազդեցության մեջ են մի կողմից միօրինակացում (ստանդարտավորում), մյուս կողմից հուզականություն ստեղծելու միտումները, որոնք պայմանավորված են նրանց բովանդակության երկպալանայնությամբ (հաղորդում և հուզական ազդեցություն ընթերցողի վրա):

Ս. Ն. Կոթինյան գտնում է, որ թերթի հիմնական գերերից մեկը հաղորդումն է (информация), որն աստիճանաբար ստացել է ազդեցություն-պրոպագանդիստական, ներգործող արժեք: Հիշենք, որ Վ. Բ. Լենինը թերթը համարել է չորսերկուրդ ագիտատոր, պրոպագանդիստ և կազմակերպիչ: Թերթը մասսայականացնում է գիտության, տեխնիկայի նորությունները: Առանձնացվում են թերթի ինֆորմացիոն, լուսավորական, դաստիարակչական, կազմակերպչական կողմերը: Բայց հիմնականը պրոպագանդիստական-ինֆորմացիոն կամ ներգործող-ինֆորմացիոն դերն է: Թերթի և ամբողջությամբ վերցրած հրապարակախոսության գործառական էության ալիսպիսի մեկնաբանությունը բխում է թերթի պրոպագանդիստական էության լենինյան դրույթներից¹:

Թերթի լեզվի առանձնահատկությունը նրա յուրահատուկ և կանխամտածված արտահայտչականության մեջ է, որը կարող է իրականացվել տարբեր ձևերով: Ըստ Վ. Կոստոմարովի հրապարակախոսության հիմնական ոճաբանական սկզբունքը արտահայտչականության և միօրինակի (ստանդարտի) զուգակցումն է:

Դ. Վովչակը թերթի գործառական-ոճական միասնության բնորոշ հատկանիշը իրավացիորեն համարում է փոխաբերական արտահայտությունների (պարաֆրազների) օգտագործումը²: Նրկու և ավելի բառերի զուգակցումով ստեղծվում են փոխաբերություններ, ինչպես՝ արծաթե քելեր, առողջապահու-

¹ С. Н. М. Н. Кожина, Стилистика русского языка, М., 1983, с. 183—198.

² Д. П. Бовчак, Художественная и газетная речевая образность («Исследования по стилистике», Свердловск, 1976, с. 5).

թյան զինանոց, ճեմակ իսլաթավոր, կանաչ ճանապարհ, գերմանական զորքերի թեթև զբոսանք, պողպատե սիրտ (Ուրալի մասին), կրակով սանրեյ սև-նապաստակ, արդուկած զորքեր, վառվող ջանի վերածվել (հրդեհվել), ծաղիկ հասակ, արյունոտ հունձ (բնաշնչում), դատարկ կրակոցներ, վիրաբուժական լսողություն, պլուրոսյան հաղթանակ և այլն: Հիմնականում դրանք հրապարակախոսական փոխաբերություններ են, որոնց զուգահեռ գործածվում են նաև լեզվական և անհատական-հեղինակային փոխաբերություններ: Դրանք բոլորն էլ ծառայում են թերթի հաղորդագրության արտահայտչականությունը ապահովելուն: Այսպես է բնութագրում Դ. Վովչակը թերթի փոխաբերությունները:

1. Փոխաբերական արտահայտությունները ծառայում են որպես թերթի նյութի բառային զարդարանք: Նրանք ներքին իմաստային կապ չունեն նյութի թեմատիկայի հետ, նրա արտալեզվական հիմքի հետ:

2. Մեկ արտահայտության սահմաններում օգտագործվում են տարբեր ծագում, ըմբռնողության տարբեր լիցք, իսկ երբեմն էլ տարբեր ոճական երանգավորում ունեցող փոխաբերական արտահայտություններ:

3. Փոխաբերական արտահայտության միացումը կոնկրետ բնույթի բառերի, արտահայտությունների հետ կատարվում է մեխանիկորեն. այն պայմանավորված է ոչ թե միացվող խոսքային փաստերի իմաստային կապերով, այլ վերացական գործառական ոճական պահանջով հուզականության և միօրինակացման միացման մեջ:

4. Թերթի պատկերավորության արտաքին բնույթի ամենահամոզիչ ապացույցը հանդիսանում է լրագրային շարքերի առկայությունը, որոնց հիմք են ծառայում բառազդանշանները. տարբեր շարքերի արտահայտությունները հաճախ միմյանց հետ սերտ հարաբերության մեջ են մտնում ստեղծելով ընդհանուր միօրինակ պատկերավոր բառակապակցությունների ամբողջական միություն:

Ընդհանուր առմամբ ընդունելով Դ. Վովչակի այս բնութագրությունները՝ գտնում ենք, որ նրանում տեղ են գտել որոշ ծայրահեղություններ: Փոխաբերությունը չի կարելի ներկայացնել որպես նյութի թեմատիկայի և նրա արտալեզվական հիմքի հետ կապ չունեցող երևույթ, թեև, իրոք, նրանց կապը ուղղակի է: Դ. Վովչակի մյուս բնութագրումները վերաբերում են նաև բանավոր հրապարակային խոսքին:

Շատ փոխաբերական արտահայտություններ ստեղծվում են որևէ բառի հիմքի վրա. օրինակ՝ առողջապահության զինանոց, մտքի զինանոց, դաստիարակության զինանոց, նյութական և բարոյական միջոցների ներգործման զինանոց և այլն: Այս գործածությունները, ինչպես երևում է, կապ չունեն զինանոց բառի ուղղակի իմաստի հետ: «Սև ոսկի» փոխաբերությունը օգտագործում ենք նաև թերթի վերաբերյալ, նկատի ունենալով նրա արժեքը, «սպիտակ ոսկի» ասելով բամբակ ենք հասկանում: Նավթի համար գործածվում է նաև «հեղուկ ոսկի» արտահայտությունը: Փաստորեն փոխվել են միայն մակդիրները: Կամ «պատերազմ» բառի փոխարեն գործածվում են «կրակե փոթորիկ», «կրակե դժոխք» և այլն:

Փոխաբերական արտահայտությունները հաճախ օգտագործվում են տեքստը կենդանի դարձնելու համար: Փաստորեն կատարվում է բառիմաստի ընդլայնում, գործածության ոլորտի լայնացում: Դա երևում է նաև նրանից, որ հաճախ տարբեր ծագում, ոճական տարբեր գունավորում ունեցող փոխաբերական արտահայտությունները հանդես են գալիս միասին, բազմակի անդամների կամ էլ փոխադարձաբար նախադասության անդամներին լրացնելու դերով: Օրինակ՝ «Մենք կարոտով ենք սպասում քեզ, կանաչ-կարմիր Մայիս, գու հորդաբուխ գարնան շքեղաշուք դարպաս», «Ուրեմն դու նաև մեծ հաջողությամբ ես, Մայիս, համերաշխության, խաղաղության մեծ սերմնացան» (ՄՂ, 1. V. 1985), «... ֆաշիզմին՝ 20-րդ դարի այդ ժանտախտին ...» (ՄՂ, 8. V. 1985):

3 նույն տեղում, էջ 5:

Փոխաբերական արտահայտությունները մեծ մասամբ հենվում են բառադրանշանների վրա, որոնք հենակետային բառեր են: Դրանք կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի. օրինակ՝ մեկնարկ, զինանոց, առանցք, ղեկ, վերջակետ, ձեռագիր, օղակ, բանալի, ռիթմ, երգ, փոթորիկ, մթնոլորտ, հեղեղ, գետ, բերք, ճակատ, ընկերանալ (գիտություն, արվեստի, սպորտի, թատրոնի, գրքերի հետ), լարել (հարաբերությունները), կանաչ և այլն:

Փոխաբերությունները օգտագործվում են տարբեր հանգամանքներում: Դրանք ծառայում են որպես շինանյութ. նույն բառը հաճախակի կրկնելուց խուսափելու համար փոխարինվում է փոխաբերությամբ: Փոխաբերականացման մյուս կարևոր առանձնահատկությունը փոխաբերության «տնտեսման» (экономическая функция) դերն է: Փոխաբերության վերաբերյալ «տնտեսման» տերմինը առաջին անգամ գործածել է Խ. Կասարեսը, որն այդ դերը բացատրում է նրանով, որ նույն միտքը կարելի է արտահայտել և՛ մեկ մեծ նախադասությամբ, և՛ փոխաբերաբար գործածված մեկ բառով: Փոխաբերությունը, որպես ոճական միջոց, հնարավորություն է տալիս միանգամից հասնելու երկու նպատակի՝ պատկերավորության և սեղմության: Այն իմաստային տեսակետից շատ տարողունակ է:

Ընդհանուր առմամբ օրինաչափ և արդարացի է փոխաբերական արտահայտություններ ստեղծելու և օգտագործելու ձգտումը: Նրանց միջոցով հեղինակները ձգտում են կամ ուժեղացնել պատկերացումը՝ հաղորդման մասին, կամ էլ խուսափում են խոսքային նույն տարրերի հաճախակի կրկնություններից: Բայց ստեղծելով պատկերավորություն և հուզականություն, միաժամանակ փոխաբերությունը կարող է խոսքը դարձնել բարդ և ոչ մատչելի, եթե այն չափավոր ու նպատակային չի գործածվում:

Փոխաբերությունները բաժանվում են երեք խմբի՝ ընդհանուր-լեզվական, անհատական-հեղինակային և զուտ լրագրային: Վերջինիս տակ հասկացվում են հրապարակային խոսքում լայնորեն օգտագործվող փոխաբերությունները, որոնք ստեղծվում են անհատական-հեղինակային փոխաբերությունների ընդհանրացման, լրագրային շարքի մեջ ընդգրկելու հետևանքով:

Մամուլի էջերում, ինչպես նաև բանավոր հրապարակային խոսքում ավելի շատ հանդես են գալիս զուտ լրագրային փոխաբերություններ. «...պրոպագանդայի ամբողջ զինանոցն ու կուտակված փորձը նպատակամղել այս պարտքի կատարմանը...» (ՍՂ, 6. I. 1984), «...աշխատանքի գլխավոր օղակը...» (Լ. ուղ., հ. 3, 1985), «...լայն ճակատով կազմակերպել...» (Լ. ուղ., հ. 2, 1983), «...թունավորում են սոցիալ-հոգեբանական մթնոլորտը կոլեկտիվում» (ՍՂ, 26. IV. 1984) :

Հրապարակախոսական ոճի բոլոր ենթատեսակներում լայնորեն հանդես են գալիս ընդհանուր-լեզվական փոխաբերությունները: Դա պայմանավորվում է հրապարակային խոսքի խնդիրներով: Այն պետք է հանրամատչելի լինի: Այսպես՝ «Մարդ լինելու համար ամենից առաջ հարկավոր է ճանաչել իր արմատները...» (ՍԴ, 26. IV. 1985), «Հողը նրա համար տուն է, օջախ, պատիվ» (ՍՂ, 19. XII. 1985), «...Հավատն է այն ցեմենտը, որ այժմ շաղախում է բանակը» (ԱՂ, ՊՄՃ, Գ. 1, էջ 88), «...ցարական ժանդարմներն արդեն աքսոր էին բշտում հայ մտավորականության ծաղիկը...» (ԳԷ, ՅԵՂ, էջ 37), «...մենք արդեն գործ ենք ունեցել ոչ թե մարդու, այլ օճառի պղպջակի հետ...» (ԶԲ, Խ, էջ 270):

Անհատական-հեղինակային փոխաբերությունները հազվադեպ են գործածվում բանավոր հրապարակային խոսքում: Դա բացատրվում է բանավոր խոսքի առանձնահատկություններով: Բանավոր խոսքը մեկ անգամ լսելու համար է, գրավոր խոսքը՝ կարդալու, որը կարող է և կրկնվել: Այդ հանգամանքը պարտավորեցնում է բանավոր հրապարակային խոսքում խուսափել անհատական-խոսքային փոխաբերություններից և ավելի շատ օգտագործել ընդհանուր-լեզվական և լրագրային, հրապարակախոսական փոխաբերություններ: Անհատական-հեղինակային փոխաբերություններ ավելի շատ են հանդես գալիս հրապարակախոսական գրքերում, հուշագրություններում, ակնարկներում, որով-

հետև դրանք հրապարակախոսություն լինելով հանդերձ մոտ են դեղարվիտության ոճին:

Բարձր գնահատելով մտավորականության գերը հասարակության մեջ՝ Ստ. Շահումյանը համեմատության հենքի վրա ստեղծում է անհատական փոխաբերության գեղեցիկ պատկեր, որը սեղմ ու արտահայտիչ բացահայտում է հեղինակի վերաբերմունքը. «Ընդունված կարծիք է, թե ինտելիգենցիան «երկրի աղև է»...» (ՄՇ, ՀՃ, էջ 216) կամ՝ «Թույլ ու մաշված կազմվածքը չդիմացավ բուրկ ու շարքաշ կյանքին, մանավանդ Սիրիի սպիտակ անապատում» (ն. տ., էջ 214): Հեղինակի կարծիքով Սիրիի սառնամանիքները նույն բացասական ազդեցությունն են թողնում մարդու վրա, ինչ որ անապատի շոգը:

Անհատական փոխաբերությունների վարպետ գործածության օրինակներ կան Ավ. Իսահակյանի՝ Հայրենական մեծ պատերազմի շրջանի հրապարակախոսական հոդվածներում. «...ամբողջ կրավորական գնդակ է սոսկ հերոսի ձեռքում, և հերոսը գիտե այն անշնչ նետել քիրախին...» (ԱԻ, էջ 329), «Հիտլերն ասել է, որ ինքը պատերազմն է: Պատերազմի մոլոխը, մսաղաց մեքենան» (ն. տ., էջ 332):

Այն միտքը, թե հեթաթախին փյունիկ թռչունի նման մոխիրներից հարուստն առած, ազգերի ապահով ընտանիքում բարգավաճող Սովետական Հայաստանը պատմական այս ժամանակահատվածում ինչ է նշանակում բոլոր հայերի և նրա՝ պատմության գիրկը անցած թշնամիների համար — այդ միտքը Գ. Հմինը սեղմ ու արտահայտիչ ներկայացնում է յուրօրինակ անհատական փոխաբերության միջոցով. «...ստեղծեցին այն հողոր, վերածնված Հայաստանը, որը լավագույն հուշարձանն է 1915 թվականի զոհերի և ամենից ծանր շիրմաքանդի մեր ժողովրդի բոլոր տեսակի դահիճների բարբարոսական ծրագրերի վրա...» (ԳՀ, ՅՆՀ, էջ 68):

Ընդհանրապես չպետք է մոռանալ, որ փոխաբերությունների չափազանց շատ օգտագործումը բացասաբար է անդրադառնում հրապարակային խոսքի լեզվի վրա: Դժվարանում է հաղորդվող նյութի ընկալումը, մթագնվում նրա էությունը, փոխաբերության նյութի բարդությունը ընթերցողի (լսողի) մեջ ստեղծում է արհեստականության, պաճուճազարդության տպավորություն:

Փոխաբերությունները ըստ կառուցվածքի կարելի է բաժանել երկու խմբի՝ պարզ և ծավալուն: Պարզ փոխաբերությունը բաղկացած է լինում մեկ բառից: Հայրենական պատերազմի տարիներին մեր քաղաքի զինվորներին անվանում էին «բազեններ», «արծիվներ», «ֆաշիստական զորքին»՝ «ռիմակ», նրանց զինվորներին՝ «ազաններ, բռնեհներ»: Քննադատելով այն երևույթը, որ կոլտընտեսային դաշտից մինչև պետական խանութ հասցնելը տարբեր մարդկանց կողմից տեսակավորվում է մթերքը, ասենք՝ ձմերուկը, Զ. Բալայանը գրում է. «...մարգված «դարպասապանները» որսում են ամենախոշոր, ամենահասուն «գնդակները» (ԶԲ, հ., էջ 170): Մավալուն փոխաբերությունը արտահայտվում է բառակապակցությամբ, մի քանի բառերով: Օրինակ՝ «օգտվելով «ծուռ հայելու» միամիտ մեթոդներից, նրանք ամեն ինչ գլխիվայր են շուռ տալիս...» (Լ. ուղ. հ, 4. 1985), «Զնալած ռազմաքաղաքական բարդ իրադրությանը, հարկ չկա այն դրամա դարձնել», «Սովետական ժողովրդի նյարդերն ամուռ են» (ՍՀ, 4. II. 1985), «Եվրոպայով մեկ արդեն սողում էր ֆաշիստական ժանապարհը» (ԱՂ, ՊՄՃ, Գ 1, էջ 219):

Իմաստային-ծագումնաբանական հիմունքով փոխաբերությունները բաժանվում են երկու խմբի՝ ժողովրդական և գրական: Ե՛վ ժողովրդական, և՛ գրական ծագում ունեցող փոխաբերությունները լայնորեն օգտագործվում են հրապարակախոսական ստեղծագործություններում:

Ժողովրդական փոխաբերություններ. «Թոզ ամեն մեկն իր ականջին օղ անի...» (ՍՀ, 7. I. 1984), «Ես պարզեցի, որ ծիլերը կախված են ոչ միայն ուսուցչից, ոչ միայն սեմներից, այլև՝ հենց հողից» (ՄԴ, 26. IV. 1984), «Սըրտիցդ առյուծ է կաթում, երբ նայում ես պատանու գեղեցիկ, խելոք դեմքին...» (ԶԲ, հ., էջ 152), նրա կյանքը մազից էր կախված» (ԱՂ, ՊՄՃ, Գ 2, էջ 4),

«...երկար ժամանակով դագաղ դրին նրա անկախության երազն ու պետականության տենչը...» (Գէ, 362, էջ 30):

Գրական փոխաբերություններ. «Ուսուցիչը երբեք չպետք է մոռանա, որ իր կոչումն աշակերտներին գիտության այրուքենն ուսուցանելու, նրա գաղափարները բացելու հրաշք բանալին տալու մեջ չէ միայն» (ՍՀ, 1. IX. 1984), «Զարմանալի սիգիֆյան ջանքերով շատ ավելի կանգ են առնում հայոց լեզվի քերականական կանոնների ուսուցման վրա, քան բուն լեզվի» (ԳԹ, 9. III, 1984), «Ռազմի դաշտում Աժդահակ են եղել նրանք, իսկ սիրո մեջ՝ Արա Գեղեցիկ» (Գէ, 362, էջ 21):

Ըստ գործածության ոլորտի բոլոր փոխաբերությունները միատեսակ չեն: Որոշ փոխաբերություններ շատ նեղ գործածություն ունեն, հազվադեպ են հանդիպում: Օրինակ. «Զէ՛ որ Իջևանը Հայաստանի հյուսիսային դարպասն է, մեր հայրենական տան սեմը...» (Գէ, 362, էջ 249), «...Ռուսաստանում հաստատվել էր նոր հասարակարգ, ու լեհինը նրա գլխավոր ճարտարագետն էր» (ՀԶ, էջ 566), «... «Կարմիր գրոշը» հիտլերյան ցուլերին գրգռող, խենթացնող առեւտրորի կարմիր կերպասն է» (ԱԻ, էջ 330), «Բայց միշտ էլ վտանգավոր է իսկական տաղանդը խցկել հանրաճանաչ դրույթների պրոկրուստյան մանիքը» (ԱՀ, ՊՄԺ, Գ 2, էջ 154), «Ես իհարկե, կարդարանամ: Բայց դա կլինի այսուրոյան ճաղքանակ» (ԶԲ, Խ., էջ 186):

Մի շարք փոխաբերություններ շատ լայն գործածություն ունեն հրապարակախոսական ստեղծագործություններում: Գրավոր և բանավոր հրապարակային խոսքում հաճախ են հանդես գալիս «սրտի բանալի», «կյանքի թել», «նայել մանկան աչքերին», «կյանքի ռիթմ», «կտրել արմատից» և այլ փոխաբերություններ:

Որոշ փոխաբերություններ էլ սովորական, միջին գործածություն ունեն: Դրանք իրենց գործածությամբ տարբերվում են նեղ և լայն կիրառություն ունեցող փոխաբերություններից: Կոմիտասին շատ երաժշտագետներ, երգահաններ են հետևում: Գ. էմինը դա արտահայտում է այսպիսի փոխաբերությամբ. «Նրա աճյունը հայրենի հողում թաղվեց այն սերմի նման, որից այսօր հայ երաժշտության աճառներն են սերում...» (Գէ, 362, էջ 434):

Փոխաբերությունները կարելի է խմբավորել նաև հետևյալ հիմունքներով.

1. Ըստ հենակետային թափ խոսքիմաստային պատկանելության. որպես այդպիսի բառեր, հաճախ հանդես են գալիս գոյականները (պողպատե մայրուղի, գրական կամուրջներ, կրակե փոթորիկ, կենդանի ճանապարհաբան, կենսագիրքորոշման առանցք, ներգործման զինանոց և այլն), բայց (ձեռքերն այլել անմաքուր գործերում, սրվել է գաղափարական պայքարը, թունավորել մթնոլորտը, ճամբարներ մի ժողովուրդ, զուլալվեց ֆաշիստական Գերմանիան, արյունն արթնացավ, քարավանական ճանապարհները մամուռացին): Քիչ են հանդիպում ածականները (կանաչ ճանապարհ, սիգիֆյան աշխատանք, պլուրոսյան հաղթանակ և այլն): Մյուս խոսքի մասերին պատկանող հենակետային բառերը հազվադեպ են:

2. Ըստ փոխաբերության հիմքում ընկած հատկանիշի բնույթի. դա կարող է լինել արտաքին նմանություն (արծաթե թելեր, պատվել եղյամով, կտրել արմատից, հրետանու ափսոս, յարձճե տեղատարափ և այլն), պաշտոնների, դերերի, գործողությունների նմանություն (արտագրության շտաբ, հրե մորիկ, սրտի բանալի, կրակե հեղեղ և այլն):

3. Ըստ նախադասության մեջ փոխաբերության կատարած շարահյուսական դերի.

Այն գերազանցապես ստորոգյալ է դառնում, բայց կարող է հանդես գալ նաև որպես ենթակա, լրացում:

Ստորոգյալ

ա) պարզ ստորոգյալ՝ «...արյունդ սառչում է սրտիդ մեջ, ուղեղդ ֆրեֆրվում է...» (ԱԻ, էջ 337), «Նրանցից ոմանք վարակվում են սպառողական հոգեբանությամբ» (ՍՀ, 10. I. 1985), «Նա իրեն պատռում է, որ ծիծաղեցնի»

(ԳԹ, 11. V. 1984), «Փառքդ շատ, մա՛րդ, որ... քարտեզիդ իշխող գարննա-գույնից ծվեններ պոկելով ներկում ես կանաչ ու միացնում արյան պես քիչ, արյան պես թանկ բերրի հողերիդ» (ԳԹ, 1. II. 1985):

բ) բաղադրյալ բայական ստորոգյալի մաս՝ «...ցանկանում են նորից խառնել աշխարհը...» (ԳԹ, 4. V. 1984), «Նրա դեռ չգունաթափված հիշողության ծալքերից սկսեցին դուրս լողալ դեմքեր, կերպարանքներ» (ԳԹ, 13. VIII. 1984):

գ) Անվանական բաղադրյալ ստորոգյալի ստորոգելի՝ «Լեզուն աշխարհ է...» (ՍԴ, 10. I. 1985), «Նա, ասացի, գործող նրաբուխ էր» (Գ, հ. 11, 1984, էջ 17), «...ամուր բռնեց է» (ՍԴ, 28. II. 1985), «Լեզուն գրողի զենքն է...» (ԳԹ, 17. V. 1985), «Ստեղծագործությունը... գրողի ձայնն է, նրա խղճի ձայնը, ստեղծագործությունը գրողի խոստովանությունն է: Ինքը գրողը իր ժամանակի խիղճն է, նրա ներքին աշխարհը» (ՍԴ, էջ 25):

դ) ենթակա՝ «Ֆաշիստական իժը պառկել է մեր ճանապարհի վրա» (ՍԶ 17. VIII. 1941), «Մշակութային ամենամեծ հուշարձանը լեզուն է» (ՍԴ, 10. I. 1985), «Ժամանակ-նեպրեթացը սլանում է » (ՍԴ, էջ 252):

ե) ենդորներն ու պարագաներ՝ «Նա (հրապարակախոսությունը—Օ. Բ), կախադրակն փայտիկ (ուղիղ խնդիր) լուսի, որ մի քանի անգամ թափահարելուց հետո անմիջապես երևա արդյունքը» (ԳԹ, 18. V. 1984): «Ֆաշիստ գաղափարախոսները հավատացնում են... 20-րդ դարի այս նոր հաշիշյաններին» (հանգամանակալի խնդիր)... (ԱԻ, էջ 326), «Ուրեմն հրաժարվենք ջայլամի սովորությունից» (անշ. անուղղակի խնդիր)... (ՍԴ, էջ 250), «Գլորիում (են) հանցագործությունների ճանիներ» (տեղի պարագա) (ՍԶ, 10. I. 1985), «Ջայլամի նման մեր գլուխը թաքցնում ենք մեր արվեստի բարդության և մասսաների անկուտուրականության» տեսության անհուսալի ավազներում» (տեղի պարագա) (ՍԴ, էջ 288), «...ուրեք ցանկանում են նորից խառնել աշխարհը՝ իրարից մի բան թոցնելու համար (նպ. պարագա) (ԳԹ, 4. VI. 1984), «Գայլի ախորժակով, դավադրաբար, ստոր ավազակի պես Հիտլերը հարձակվեց մեր հուռթի դաշտերի վրա» (ձևի պարագա) (ԱԻ, էջ 333):

Հաղորդման արտահայտչականությունը ուժեղացնելու նպատակով հաճախ նույն նախադասության մեջ գործածվում են մի քանի փոխաբերություններ: «Պրոլետարիատի ստեղծագործական ուժը և կուտուրական ուղղության աննախընթաց մեթոդը (ենթ.) վաղուց արդեն մեր գլուխների վրայից ցրել են ավազի այդ բարակիկ շերտերը (ուղիղ խնդ.)...» (ՍԴ, էջ 25), «Մենք հաճախ բոցի թրթռացող լեզվակներն (ուղիղ խնդ.) ենք միայն տեսնում, ծովսն ու ծծումբը (ենթ.) աննկատ են մնում» (Ավանգ., 14. III. 1984), «Անցյալի և ներկայի մոմեր (ենթ.) կան, որոնք ապագայի համար հզոր լուսարձակներ (ստորոգելի) են» (ԳԹ, 12. VII. 1985): Դրանք ժողովրդի կենսագրության թելերն (ստորոգելի) են, որոնք համեմատաբար աննկատ են մնում գործվածքի ետևում, որպեսզի շքեղ ու ամբողջական լինի գորգը (ենթ.):» (ԳԹ, 12. VII. 1985):

Հրապարակախոսական ոճում գործածված փոխաբերությունները կարելի է դասակարգել նաև ըստ իմաստի և ձևի հարաբերության: Օրինակները ցույց են տալիս, որ շատ են հատկապես հոմանիշ փոխաբերությունները (կրակե փոթորիկ, հրե մրրիկ, կրակե դժոխք, արձձե անձրև, արձձե տեղատարափ, արծիվներ, բազեններ, սև քսկի, հեղուկ ոսկի և այլն):

Հրապարակախոսությունը թեմատիկ առումով բազմազան է: Նշենք առավել կարևորները՝ քաղաքական, տնտեսական, փիլիսոփայական, բարոյական, դաստիարակության, մշակութային, կենցաղային: Այս բոլոր ոլորտներում էլ գործածվում են փոխաբերություններ, իհարկե, իմաստային յուրահատուկ երանգով:

Քաղաքական. «Ամերիկյան վարչակազմի ներկայիս հայտարարություններն իր քաղաքականության բառափոխ են» (Կոմ., 23. I. 1984), «Պատմության դասերը հուսալի դառա՞վորեն են» (Ն. տ.):

Տնտեսական. «Մետալուրգիական արտադրամասը կոմբինատի սիրտն

է...» (ՍՀ, 3, I. 1935), «Սա այն այբուբենն է, որը պետք է սովորեցնել արտադրության նորեկներին...» (ն. տ.):

Փխխոսվալական. «Այս առումով բուրժուական սոցիոլոգիական մտքի շուկայում ծնվում են իրենց տարբերակներով բազմաթիվ կոնցեպցիաներ» (Կոմ., 2. VII. 1985):

Բառյալական. «Գրիչը ձեռքդ վերցնելուց առաջ հարկավոր է ծանոթություն քեթև առնել, խորհրդակցել սեփական խղճի հետ, իրեն դնել այն մարդու փոխարեն, որին ուզում ես սեպնել ու մոռանել» (ՍՀ, 26. IV. 1984):

Դաստիարակություն. «Դա այն հայտնի, խարուսիկ վիճակն է, երբ մարդը առյուծանում է... սա արդեն ոչ առյուծ է, ոչ էլ վագր, խեղճ ու հեզաբարո կենդանի է, մի քիչ էլ՝ վարկաբեկված» (Ավանդ., 14. III. 1984), «Սովորաբար ընտանեկան դաստիարակության զինանոցը բնութագրվում է դրական ու բացասական հատկանիշներով...» (Լ. ուղ., 4. 2, 1985):

Ինքնադային. «Ասել, թե նա երկնքից ասաղեր է ցած բերում, սխալ կլինի» (ԳԹ, 1. II. 1985), «... Բամուն տալ ընտանիքի ունեցած-չունեցածը... թե ով որ հարսանիքում պետք է նվագի, համեղ պատառ թոցնի» (ՍՀ, 11. II. 1985): Մշակութային. «Տարիների լուսթյունն ընդհատեց մանկապատանեկան կինոն՝ դեռահասներին հասցնազրելով «Գիթորի» նոր էկրանացումը» (ՍՀ, 6. VII. 1984):

Օրինակները ցույց են տալիս, որ շատ բառեր (բանալի, առանցք, զինանոց, մթնոլորտ, մայրուղի և այլն) իրենց փոխաբերական իմաստներով հանդես են գալիս հրապարակախոսական ոճի տարբեր ենթատեսակներում: Օրինակ՝ «Պրորվմի բանալի են մարքս-լենինյան սկզբունքները...» (Կոմ., 20. I. 1984), «... Կարողացան ընչազուրկ պատանու սրտի բանալին գտնել...» (ԱՂ, ՊՄԺ, Գ 1, էջ 180), «Այդ հնադարյան ուսական քաղաքը Հիտլերը համարում էր Մոսկվայի բանալին» (ԱՂ, ՊՄԺ, Գ 2, էջ 452):

Պետք է նշել նաև, որ հրապարակախոսական ոճի տարբեր ժանրերում նույն չափով չեն գործածվում փոխաբերությունները. առաջնորդող հոգվածներում համեմատաբար քիչ են, իսկ հրապարակախոսական գրքերը, ակնարկները, նամակները, հուշագրությունները, ճանապարհորդական ակնարկները և այլն ավելի շատ են պարունակում փոխաբերություններ, որովհետև հրապարակախոսություն լինելով հանդերձ դրանք մոտ են գեղարվեստական ոճին (կարելի է անվանել գեղարվեստական հրապարակախոսություն):

Փոխաբերության գործածության տեսակետից յուրահատկություններ ունեն թերթը, ամսագիրը և գիրքը: Թերթի բնույթը ևս նշանակություն ունի: Սովետական Հայաստան» թերթը կուսակցական, քաղաքական բնույթ ունի, նրա էջերում հիմնականում հանդես են գալիս լրագրային, ընդհանուր-լեզվական փոխաբերություններ: «Գրական թերթը» ավելի հարուստ է և՛ ընդհանուր-լեզվական, և՛ անհատական-հեղինակային փոխաբերություններով: «Գրական թերթի» լեզուն: ավելի մոտ է գեղարվեստական ոճին: «Սովետական դպրոցը» և «Պիոներ կանչը» նույնպես յուրահատկություններ ունեն փոխաբերության տեսակետից: «Սովետական դպրոց» թերթում հանդես են գալիս փոխաբերության բոլոր տեսակները, իսկ «Պիոներ կանչի» էջերում դրանք շատ քիչ են հանդիպում: Կանաչ ճամփա, կանաչ լույս, կանաչ գորգ, անամպ ու կապույտ երկինք, դեղատոմս առաջարկել, բարիքը ֆամուն շտալ, սաեբել անտառը, ամառը մտավ դպրոց և այլն: Դա օրինաչափ է, որովհետև թերթը նախատեսված է միջին տարիքի դպրոցականների համար: Անհիմնյան ուղիով տեսական-քաղաքական ամսագրի նյութերում փոխաբերությունը քիչ գործածություն ունի: Բերենք միայն մի քանիսը. «լայն նակատով կազմակերպել», «գլխավոր օղակ», «կենսագիրքորոշման առանցք», «ներգործման զինանոց», «միավորման զենք», «սոցիալական կողմնորոշման առաջապա», «վերափոխումների և պրոգրեսի մայրուղի» և նման ընդհանուր-լեզվական փոխաբերություններ: Փոխաբերությունների գործածության հարցում կարևոր է նաև հրապարակախոսական նյութի թեման, հեղինակի մասնագիտությունը, զբաղմունքը: Սովետական Միության

հերոս, գեներալ մայոր Ա. Վ. Ղազարյանի «Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր» քառահատոր աշխատությունում իշխում են ընդհանուր-լեզվական փոխաբերությունները, որոնց մեծ մասը կապված է ռազմական, պատերազմական կյանքի հետ:

Գ. էմինի «Յոթ երգ Հայաստանի մասին» հրապարակախոսական գիրքը շարունակ է ընդհանուր—լեզվական և անհատական—հեղինակային փոխաբերություններով, որոնք յուրօրինակ արժեք են ստանում գրքի համապատասխան մասերում:

Ինչպես տեսանք, հրապարակախոսական ոճում բավական յուրահատուկ է իրառություն ունի փոխաբերությունը: Դա պայմանավորվում է նրանով, որ ժամանակի հետ համընթաց քայլող, ժամանակի պահանջները հաշվի առնող հրապարակախոսը ձգտում է հուզական, արտահայտիչ դարձնել իր խոսքը, ներգործել ընթերցողի կամ ունկնդրի ոչ միայն մտքի, դատողության, այլև զգացմունքների, երևակայության վրա: Իսկ դա հնարավոր է միայն լեզվի պատկերավորության և արտահայտչականության համապատասխան միջոցների, այդ թվում և փոխաբերության օգնությամբ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՋԲ, Խ. — Ջ. Բալայան, Խիզ, Երևան, 1978
 ԳԷ, ՅԵԶ — Գեորգ էմին, Յոթ երգ Հայաստանի մասին, Երևան, 1981
 ԱԻ — Ա.Ի. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1977
 ԱՂ, ՊՄԸ — Ա. Վ. Ղազարյան, Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր, գիրք առաջին, Երևան, 1979, գիրք երկրորդ, 1982, գիրք երրորդ, 1985
 ՍՇ, ՀՂ — Ստ. Շահումյան, Հողմածներ և ճառեր, Երևան, 1953
 ՍԴՏ — «Սովետահայ գրականության տարեգրություն», Երևան, 1957
 ՀԲ — Հր. Քոչար, Հետիւր երկեր, Երևան, 1977
 Ավանդ. — «Ավանդարդ»
 ԳԹ — «Գրական թերթ»
 Լ. ուղ. — «Լենինյան ուղիով»
 Կոմ. — «Կոմունիստ» (Բաքու)
 ՍԶ — «Սովետական Հայաստան» (Թերթ)
 ՍԴ — «Սովետական դպրոց»
 ՍՂ — «Սովետական Ղարաբաղ»
 ՊԿ — «Պիոներ կանչ»

ПРИМЕНЕНИЕ МЕТАФОРЫ В ПУБЛИЦИСТИЧЕСКОМ СТИЛЕ

ОФЕЛЯ БАБАЯН

Резюме

Метафора в публицистическом стиле имеет весьма своеобразное применение, обусловленное спецификой самого стиля. Осуществление функции воздействия в публицистике становится возможным именно с помощью выразительных средств языка, особенно такой их эффективной формы, как метафора. В публицистической литературе употребляются общеязыковые, индивидуально-авторские и сугубо публицистические метафоры, метафорические парафразы, в основе классификации которых лежат различные признаки: семантико-этимологическая основа, слова, его структурный состав, сфера употребления, отнесенность опорного слова к той иной части речи, соответствие звукового оформления слова его смыслу, признак, лежащий в основе переноса, синтаксическая роль в предложении. Степень применения метафор различна в различных стилях публицистики. В плане использования метафор имеют свои особенности газета, журнал, книга, учитываются характер газеты, возраст читателя: важны также тема публицистического материала, специальность автора, род его занятий.